



Holy Trinity Armenian Church

14 Woodlawn Avenue West, Toronto 7, Ontario – 923-0081

Jirayr Tashjian Pastor

Հովուական Զեկոյց

Սիրելի եւ հարազատ զաւակներ եւ ծխական անդամներ թորոնթոյի Ս.Ներրորդութիւն Հայց.Առաք.Եկեղեցւոյ,

Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան Թեմի Բարեխնամ Առաջնորդ Գերաշնորհ Տ.Թորգոմ Ս.Արքեպիսկոպոս Մանուկեանի անունով սիրով կ'ողջունենք Ձեր բոլորին ներկայութիւնը, տարեկան ծխական այս ժողովին:

Մեր սրտի խորերէն փառք կու տանք բարեաց պարգեւատու Արարչին, մեր հայրերու Աստուծոյն, որ Իր երկնային հոգեւոր լոյսով մեր ժողովուրդի ենթագիտակցութեան մէջ ստեղծեր է այնպիսի վեհ հոգի մը, որ գիտցեր ենք, սեւ օրերու մէջ երազուած լուսաւոր կարելիութիւնները իրականութեան վերածելու զաղտնիքը: Այդ վեհ հոգիին սկզբունքը մեր հոգիներուն մէջ, շարունակական ստեղծումով եւ վերստեղծումով պահեր ենք մեր հաւաքական գիտակցութիւնը աշխարհի ամէն կողմերուն վրայ:

Հայց.Առաքելական Ս.Եկեղեցին մեր իսկ ազգին այդ հաւաքական գիտակցութեան անկորնչելի արտայայտութիւնը մեզի համար եղած է դարեր շարունակ հայ հոգիներու թագաւորութիւն մը: Այդ հոգին է որ հայերէն խօսող Աստուած մը տուած է այս ժողովուրդին, այդ հոգին է որ մեր ազգային զոյուլութեան պահպանումին մէջ կրօնքը իբրեւ միջոց դաւաներ է, այդ հոգին է որ տակաբէն ազգայնացուցեր է հայ պետական կրօնքը եղող քրիստոնէութիւնը, եւ իր ազգային ու կրօնական անկախութեան համար մերժեր է ենթարկուիլ 451 թուականէն ետք ունէ տեսակի քաղկեդոնական խառն ու խրթին վէճերու ու վիճաբանութեանց մէջ:

Այդ հայու հոգիին երջանիկ մէկ համերաշխութիւնը գտեր ենք նաեւ հոս, թորոնթոյի Ս.Ներրորդութիւն Հայց.Եկեղեցւոյ մէջ, ուր մեր ազգային եւ կրօնական զոյուլութեան պահպանումին համար ջանք չէ խնայուեր կազմակերպելու եւ տեւականացնելու իր ուռոյն պայմաններու համաձայն շաքաթօրեայ եւ կիրականօրեայ լսարանները, երիտասարդական եւ





Holy Trinity Armenian Church

14 Woodlawn Avenue West, Toronto 7, Ontario – 923-0081

Jirayr Tashjian *Pastor*

տիկնանց համախմբումները, ինչպէս նաեւ պարտականութեանց եւ պատասխանատուութեանց խոր գիտակցութեամբ, տարիներու ընթացքին իրարու յաջորդող սերունդներու պատիկ ջանքերով, պատիկ մաքառումներով, պատիկ զոհողութիւններով, անձնուիրութեան ու արդար փառասիրութեան անունով թափուած քրտինքի պատիկ կաթիլներով շիներ են անոնք իրենց ազգային հոգիին դրամագլուխը, որ իր մէջ պիտի տաղաւարեր, ծրարեր, համեմատաբար աւելի մաքուր եւ աւելի բարձր ընդունակութեան մը անհրաժեշտ կարողութիւնը: Օտար աղբիւրներէ մեզի աւանդուած պատմութիւն մը շատ յատկանշական է ցոյց տալու համար հայու հոգիին մեծութեան զաղտնիքը: Երբ օր մը, Մեծն Տիգրան, Տիգրանուհի եւ Կիւրոս սեղանակից էին իրարու, Տիգրան Կիւրոսի զեղեցկութենէն ազդուած իր կնոջ Տիգրանուհիին խորհուրդը կ'ուզէր իմանալ: Հայ թագուհին կը պատասխանէր. ' 'Իմ Տիգրանիս սրտի զեղեցկութեան զերազանցող չկայ' ' : Տիգրանուհիի բերնով հայ ցեղին մէջ արմատացած պարկեշտութեան, հոգեկան ու սրտի զեղեցկութեան հանդէպ շինուած պաշտամունքն էր, որ կը խօսէր այդ պահուն: Այդ սրտի զեղեցկութիւնն է որ խօսեր է նաեւ այս ժողովուրդին մէջ, բարձրացնելով զիրենք տափակութիւններէ վեր, միշտ ձգտելով դէպի բարիին, ճշմարիտին ու զեղեցիկին: Ազնուական ու մաքուր հոգիներու ջիղերովը կազմուած հաւաքականութիւն մը եղած է այս եկեղեցին, որ պատմութիւնը՝ իբրեւ իր անցեալ կեանքին յուշարարը եւ ապագայի՝ լուսաւոր փարոսը դաւանելով, պատուաբեր եւ մաքուր պահեր է ցեղին խղճմտանքին մէջ:

Այս օրերուն, գրեթէ ամէն կողմ մեր ազգային հոգիին ամենէն տկար կողմը մեր մէջ եղած է սակայն հիացումի, գնահատումի, արդար դատողութեան հետզհետէ ուժացումը: Այս ուժանալը անկասկած մեզ պիտի տկարացնէ, պէտք է զիտնանք առողջ պահել մեր նկարագիրը, մաքուր հայու հոգի մը շինելու համար: Պէտք է աշխատինք որչափ կրնանք մեր ամենամեծ կարելին ի գործ դնել, մեր զաւակներուն սրտին մէջ դրոշմելու արդար գնահատումի եւ անսակարկ նուիրումի ոգին, հանդէպ մեր հոգիին ծննդավայր Հայց.Ս.Եկեղեցւոյ եւ հայապահպանութեան: Թող ճշմարիտ դաստիարակութեան ծարաւի հայ երիտասարդը, իր մէջ մշակէ





Holy Trinity Armenian Church

14 Woodlawn Avenue West, Toronto 7, Ontario - 923-0081

Jirayr Tashjian *Pastor*

արդար գնահատումի եւ հիացման ոգին, որովհետեւ զեղեցիկին ու վսեմին վրայ հիանալով է, որ պիտի կրնանք քիչ մը աւելի մօտենալ ճշմարտութեան:

Եկեղեցին մեզի բաժին ինկած պարտականութիւնները կատարելու վայր մը չէ, այլ Աստուածային ծառայութիւն մը, որ մեր մէջ պիտի կերտէ առաքինութեան, իրաւ արժանիքի, անձնուրացութեան, հոգեկան եւ բարոյական զեղեցկութեան պաշտամունքը:

Պէտք է ջանանք յառաջ երթալ գործնական սկզբունքներու ճամբով, պէտք չէ սկարանանք մեր հայու եւ ծնողքի պարտականութիւնը կատարելու համար: Որչափ ալ շրջապատուած ըլլանք արտաքին խորթ ազդեցութիւններէ, պէտք չէ վախնանք անոնցմէ, այլ մեր արի կեցուածքով եւ հայու բարձր նկարագրով պայքարինք բոլոր տեսակի դժուարութեանց եւ կրաւորականութեանց դէմ: Մեր Տէրը ըսած է. "Մի վախնաք անոնցմէ որ մարմինը կը սպաննեն, այլ վախցէք անկէ որ հոգին կը սպաննէ":

Շատոնց է շրջանաւարտ եղած ենք արդէն "չէնս" առնելու միջոցներէն, մեր աչքերը պէտք է յարենք Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ու անոր փ վեհափառ հայացքին դիմաց ծլող ու ծաղկող ու միշտ բարգաւաճող ամենայն հայոց մայր Հայրենիքին, որ միակ գրաւականն է հայ ժողովուրդի գոյութեան ու բոլոր տեսակի հարցերուն լուծման, ուր ամենէն աւելի մեր ժողովուրդը դառն փորձառութեամբ իւրացուցեր է անցեալի արժէքները արդարօրէն գնահատելու եւ անոնցմով հիանալու զգացումը:

Ամբողջական եւ անվերապահ գործակցութիւն մեր ժողովուրդին գոյութեան հրամայականներուն առջեւ: Ահա կտակը Թորոնթոյի Ս. Երրորդութիւն Հայց. Եկեղեցւոյ հիմնադիրներուն, ահա լուսաւոր փարոսը ազգային կեանքի միասնականութեան:

Կը գնահատենք պատուարժան ծխական խորհուրդի, եկեղեցապատկան մարմիններու եւ կազմակերպութեանց, ինչպէս նաեւ Բարեգործական, Մշակութային, Մարզական, Սկստական եւ հայրենասիրական կազմակերպութեանց գործակցութեան այս սքանչելի ոգին՝ հայը հայով, հայուն համար միակ կարգախօսով:

Յաջողութիւն այս ժողովին եւ օրհնութիւն 2եր բոլորին: *Jirayr Tashjian*
Յունուար 24, 1971
ՉՈՒՄԱՐԱՐՁՈՒԹԻՒՆ ՍԲ. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑՒՈՑ ԹՕՐՕՆԹՕ, ՕՆՔ. ԴԱՆԱՏԱ
Ժիրայր Վրդ. Թաշճեան, Հովիւ

